ՀԱՍՑԷ

M. ARCHAM

Poste Restante

ATHÈNES (*Grèce*)

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւնք ետ չեն ղրկուիր: Յօդուածներու պատշաճ դատուածները միայն կը հրատարակուին:

Բաժնեգնի կամ ծանուցման փոխարէն ամէն երկրի նամակադրոշմներ (փուլ) կ'ընդունուին հարիւրին 20 պակաս հաշուելով:

Ծանուցումներ կ'ընդունուին դիւրամատչելի գիներով:

ΕΦΗΜΕΡΙΣ Η ΕΝΩΣΙΣ

ՄԻՈՒԹԻՒՆ

(ՕՐԳԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ)

ԲԱԺՆԵԳԻՆ

Տարեկան արտաքին ֆրանք 4

Վեցամսեան » » 2

Հայաշատ քաղաքներու մէջ ձեռքէ կը ծախուի հատը 10 սանթիմ:

Փոսթի ծախքը խմբագրութեան կը պատկանի:

Բաժնեգինները կանխիկ վճարելի են:

Թերթ ուղղողներու բաժնեգինը չը պարունակող նամակները նկատի չեն առնուիր:

«Միութիւն»ը և ոչ մի տեղ ծրի չը ղրկուիր:

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ — ԿԻՍԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Գ. ՏԱՐԻ — ԱԹԷՆՔ 1|13 ՅՈՒՆԻՍ 1899 — ԹԻՒ 33

Լրագրոյս մէջ բոլոր հրատարակուածներու պատասխանատուութիւնը կը պատկանի իւրաքանչիւր յօդուածի հեղինակին:

ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ
ԿԱՄ ԿՈՉՈՒՄԸ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՄԷՋ

Գիտեմ որ ընթերցողները, յաճախ գրուած է այս նիւթին վրայ պիտի ըսեն, սակայն ես այս գիտնալով մէկտեղ պիտի ապացուցանեմ որ, իրաւամբ որքան գրուած է, այնքան առաւել մոռացութեան և անտարբերութեան ենթարկուած է գործի մասը. ուստի՝ յիշեցնելը բանաւոր նկատելէ զկնի, նիւթը և ոչ մէկ թերթի ուղղութեան և սկզբունքին յարմար չեմ տեսներ տալու քանի որ բոլորն ալ ոտից ցգլուխ կուսակցութիւն կը հոտին, հետևաբար արժանաւոր կը դատեմ հեռի կուսակցութիւններէ և ընդհանուր անուն մը կրող «Միութիւն» թերթին միջոցաւ հրապարակել նիւթս:

Այո՛, — Կանանց դերը կամ կոչումը յեղափոխական գործի մէջ — ըսինք, ըսենք պիտի նաև, թէ ցորչափ հայ յեղափոխութիւնը իր տեսական և գործնական ընթացքին մէջ չարժուն կերպարանք մը ստացաւ, և այն օրէն մինչև այսօր՝ արդեօք ո՞ր ճշմարիտ և խելացի հայը իր մոքով չի չափեց՝ չի կշռեց և կամ չի մտածեց Հայ-յեղափոխական ուժին վրայ ամրապէս միայնում մը բերող՝ և այդ միացման ուժը զօրացնող ամենաէական խնդրոյ մասին, այն է, կին մարդու գործօնէութիւնը գիտակցական հայրենասիրութեան և գործնական յեղափոխութեան տեսակէտին մէջ:

Հիմա, ամենքս ալ ճշմարտութիւնը խոստովանինք, առանց զիրար խաբելու թէ, մեր կանանց և աղջկանց այս գործին մէջ դեռ լաւապէս ու զգալաբար յառաջդիմութիւն չունենալնուն համար ո՞վ է արդեօք յանցաւորը. խնդիրը պարզաբանելու ձեւին գալով, պէտք է մտածելով դառնանք անոր շուրջը և լուսաբանունինք....:

Այստեղ առաջին յանցաւորը ես եմ, որ իբր եղբայր չեմ տուած իմ քրոջս այն գիտակցութիւնը ինչ չափով որ պէտք էր, անդին ինծի պէս ուրիշ մ'ալ յանցաւոր է որ, իբրև ամուսին չէ սորվեցուցած իր կնոջը, որպէս հայրենասէր կին, օգտակար ուղղութեամբ մը եռանդուն լինելուն ձեւը, և աւելի ուրիշ մ'ալ յանցաւոր է, որ, որպէս հայր չէ կարողացել իւր ընտանիքի բոլոր անդամներին (կին, տղայ, աղջիկ) վրայ բարձր հեղինակութիւն մը ազդելով անոնց մէջ արթուն գիտակցութիւն մը վառէ, բայց եթէ թոյլ տրուի մեզ, կարգին է յիշեցնել այստեղ, որ յամենայն դէպս ամենամեծ յանցաւորները մեր հասարակական կապերով կապուած հանրային կերպարանք ունեցող պաշտօնեանե ըսեն, որոնցմէ ոմանք(*) ամեն ժամանակ հայ ընտանիքի ամեն խաւերին մէջ ազատ ու արձակ երթևեկելու արտօնութիւնը և իրաւունքը ունենալով հանդերձ չեն աշխատիր մինչև հիմա հայերիս ամեն դասակարգին մէջ եռանդագին զգացում և վառ ոգի մը ներգործել, որպէս զի գիտակցութեան այս ոգին և հայրենասիրական այս զգացումը ուր չկայ այնտեղ արմատանայ, իսկ ուր արմատացած է այնտեղ աւելի եւս ուռչի և զօրգանայ; և այսպէսով այր ու կին, քոյր ու եղբայր, ըստ չափու և ըստ պատշաճութեան ամենքն ալ ստուգանաբար յառաջադիմեն և համերաշխաբար ընթանան, իւրաքանչիւր ոք՝ իրենց ինկած բաժնին մէջ:

Հայերիս, առ հասարակ ընդհ. միութեան կապը ի՞նչ զօրութիւն և ի՞նչ ուժ պիտի ունենայ, եթէ քոյրը եղբօր, հայրը որդւոյն, և կինը ամուսնոյն ուժէն բաժնուի, ի՛նչ ազդեցութիւն պիտի թողնէ գործին վըրայ հայ կնոջ մէջ եղած ուժին օգտակարութիւնը, ուրեմն, ճանչցիր զքեզ, դու հայ կին, օրն ու վայրկեանը հասեր է, ելիր շտապիր, վանէ մի կողմ քո կանացիական փափկութիւններդ, հրաժարուէ պահ մը քո հանդիստ նիստ ու կացէդ, և առնական բնաւորութեան յատուկ դիրք մը ունեցիր, ցոյց տուր քեզի, թէ դու ալ կին տեղովդ յեղափոխական կտրիճ եղբայրներուդ արիւնաներկ դերին մէջ կրնաս մտնել, զարթի՛ր, սթափուէ, գո՛ւ ազնիւ հայուհի, թօթափէ մի անգամ թոյլ ու փափուկ կենցաղիդ փոշին, մոռացիր պահ մը նուրբ ու բարակ ձևերդ, հերիք է ալ որչափ թուլացած ու փափկացած անհոգ ու անփոյթ նստար տանդ անկիւններուն մէջ, հերիք՝ որչափ հեռու և անտարբեր մնացիր, մի ըսեր թէ հայ կնոջ ուժն ու կրթութիւնը չի ներեր յայտնի կերպով ասպարէզ ելնել, ինչո՞ւ չես կարդար Ե. րդ դարու կանանց պատմութիւնը, կամ ինչո՞ւ չես հետաքրքրուիր Աթենացւոց և Սպարտացւոց մայրերի նախանձելի պատմութեամբ ուրտեղ պիտի տեսնես Աթենացի մօր մը քաջութիւնը՝ որ երբ իր երկու կորիճները պատերազմի կը ղրկէր՝ անոնց պատուիրեց որ կամ վահաննին ուսերնին առած և կամ վահաններուն վրայ պառկած գան, պատահեց որ մեծ եղբայրը պատերազմին մեռաւ, իսկ փոքրը փախաւ եկաւ մօրը ըսելու թէ՝ «եղբօրս սպաննեցին, իսկ ես փախայ» մայրը այդ րոպէին իր տղին վրայ բարկանալով՝ վերցուց վահանը տղին ձեռքէն և զարկաւ գլխին, սպաննեց ու ըսաւ. «քեզ շատ կը սիրէի որդիս, բայց քանի որ հայրենիքիդ զոհը չեղար՝ այժմ հայրենիքս աւելի կը սիրեմ քան թէ քեզ»: Ահա՛ մի ուրիշ նշանակելի կէտ մը ես, կը յիշե՞ս հայ կի՛ն, երբ 2-3 տարի առաջ Թուրք-կրետական պատերազմը սկսեց՝ 18էն 25 տարեկան յոյն աղջիկներ խնդրագիր կը մատուցանէին իրենց կառավարութեան, Կրետէի արեան դաշտը փութալու համար. ի՞նչ էր այս, եթէ ոչ գիտակցութիւն ունենալ հայրենիքի ազատութեան գործին մէջ: Ո՞ր մէկը պատմեմ քեզ հայ կի՛ն, և ինչպէս չապացուցանեմ դիւցազն Կարինէի քաջութիւնները, որ ընտիր քաջուհի մը հաչակաւոր Լէնկթիմուրի զօրաց դէմ կռուելով, ի վերջոյ ինքզինքը ահագին բարձրութենէ մը վար ձգեց անոնց ձեռքը չիյնալու համար, ալ ուրեմն, ո՞վ կըսէ թէ հայ կինը տկար է, և եթէ այս այսպէս է, ինչո՞ւ չի պիտի կապուի հայ կինը հայրենասէրի մը միութենական այն կապով՝ ինչ կապով որ կապուած է իր ընտանեկան ամբողջ կապերին հետ. ես վաղուց հաւատացած եմ որ, եթէ կնոջ գործօնէութիւնը խելացի ուղղութիւններով առաջնորդուի, յայնժամ զարմանօք պիտի տեսնենք հայ կնոջ մէջ եղած աշխոյժ գործի և վառ զգացման արդիւնքը. ասոնք բոլորը ճշմարտութիւններ լինելը գիտնալով մէկտեղ, չե՞ս ուզեր գիտնալ որ քո քոյրերէն մէկը, այն է՝ Անեցի Այծեամի նման արիասիրտ կին մը, որ երբ Դաւիթի մահէն վերջը, 1124 ին, Աբուլ-Սուարի երեց որդին Փատլուն ամիրան Անիի հոյակապ պարիսպները պաշարել կը փորձէր, իր դէմ տեսաւ հայ դիւցազնուհի մը որ կանգնած Անիի պարիսպներուն վրայ թշնամիին քարերով կը հալածէր ու կարծես ինքնիրեն կ'սէր, «թշնամիներս պիտի փախչին ու կորչին և ամօթով պիտի մնան»:

Ահա՛ ասոնք որպէս գիր մի կարդար, դու անկեղծ քոյր, օրինակուէ, ի միտ առ, յիշէ՛ քու Նախնի դիւցազնուհի քոյրերիդ անունն ու գործը, մի մոռանար անոնց յիշատակը, ծանօթացիր անոնց պատմութեան հետ, սկիզբէն մինչև վերջ համակրանօք կարդա, վերակենդանացուր սրտիդ մէջ թաղուած լուռ զգացումներդ, այնպէս որ քո սկսելիք գործին կարապետը և քո ընդունած ուղղութեանդ առաջնորդը թող չի լինի այս ու այն կուսակցութեանց կամայական ընթացքը, այլ թող լինի քո Նախնեացդ պատմութիւնը: Դէ՛հ, շտապիր, քանի չէ հասած երկրորդիւ հայուն ճակատագրին վրայ սև գծեր նկարուելու օրը, և քանի չէ թմրած դեռ հայէն աւիւնը իր մէջ. փութա՛, ժամ առաջ գործին հետ հաշտուիլ, մտքերի ազատ հաղորդակցութեան հետ կապուիլ, զի չե՞ս տեսներ որ ամբողջ աշխարհ արիւն կը հոտի, քաջալերուէ՛, տուր ձեռքդ եղբօրդ, և աղնուութեամբ երդուիր որ դու ալ քո բաժին զոհողութիւնը պիտի տաս քեզ համար սուրին ու գնդակին դէմ յանդիման կռուող և ճակատ պարզող ընկերներուդ: Ե՞րբ պիտի լսենք քո բերնէդ որ սրտանուէր աշխատանօքդ ձեռակերտած այն Նրբաշէն մատանցդ արտաքերութիւնը եղող խաչանիշ դրօշը տաս քո եղբօր՝ քո հարևանին՝ քո ամուսնոյն՝ և ըսես, «Ահա՛ եղբայր քեզ մի դրօշ, զոր իմ ձեռքով գործեցի»:

Վերջապէս՝ երկու խօսք ես յայտնելով քեզ, քո՛յր պատուական, կը յիշեցնեմ որ ի հնումն մի դիւցազանց և անվեհեր ազգ էիր, գիտե՞ս թէ ինչ ուժեր կ'նկճէին քո հայրերիդ ու եղբայրներիդ բազուկին առջև, ինչ աշխարհներ կը սարսափէին քո Նախնեացդ անունէն, և գիտե՞ս ինչ յաղթական անուններ քո հայրենեացդ ճակատին կը փայլէին, բայց հիմա աղեկէզ հառաչանօք կ'սեմ, որ հակառակ այն օրերին, գիտե՞ս թէ այժմս հայերիս արիւնալիր քողին տակ քանի՜ հոգեսպառ ու ազգաւեր կսկիծներու հուրն ու բոցը կը վառի և կը մնայ հայ սրտերի մէջ, և դու գո՞հ ես, որ մէկ կողմէն անողորմ երկինք դեռ հայութեան ճակատագրին վրայ սև ու սուգ խաղերով խրոխտայ, իսկ միւս կողմէն բարբարոս տարրերի սուրուկն ու գերին դառնանք, և կարծես ճիշդ այս օրերուն համար էր որ հայուն բարի Աստուածը չի լսեց հայերիս ձայնը: Ի՛նչ ընենք, չեղան օրեր որ երբ ահաւոր մրրիկի պէս յուզուող հայուն սիրտը կը դիմանար հազար ու մէկ պատահարների, անդին մեր հայ աղջիկներու բերնէն կը լսուէր արտայայող երգի մը այս տողերը:

— «Բնքոյշ կեանքը ծանր է թւում,

Հայ օրիորդին.

Զէն ի ձեռին սիրտ է տալիս,

Հայոց քաջերին»:

(*) Օր. քահանայք, ուսուցիչք,

— «Հայ տիկինը յորդորում է,
Ամուսնոյն գնալ.
Պատերազմի դաշտին վրայ,
Վէրք տալ ստանալ։» —

Ի՞նչ էին ասոնք, ազնիւ քոյր, բաշատրէ տեսնենք, որ հայ կնոջ կամ հայ աղջկան բերնէն կը լսուէր, կատակնե՞ր, թէ նախնական փորձեր, բայց հիմա ինչ որ ալ ըլլայ լուրջ խորհելու և լուրջ մտածելու ժամանակն է, անցաւ սին ու անոտի ուղղութեանց ու հետևողութեանց մօտան, և յաջորդեց անոր ճշմարիտ միութեան ոգին։ Ա՛րդ, դու ևս հա՛յ կին, և դո՛ւ հայ աղջիկ, շեշտելով կ'սեմ ձեզ միացէ՛ք, միութեան այս ոգւով և այս զգացմամբ, զի միութիւնը պիտի կանգնէ մեր հայրենի տան փառքն ու պատիւը.

Շաւարշ Գարագաշ

Ռուսճուք

ՄԻՈՒԹԻՒՆ

Մարդկային ո՛չ մի գիտութիւն, բնական հանճար կամ քաղաքագիտութիւն և այլ պաշտօնական հանգամանք չեն զօրեր երբէք ճշդիւ մակաբերել ազգաց ապագայ ճակատագրի իսկութիւնը. քաղաքականութեան սեղանի շուրջը բազմողներն իսկ՝ որք ժողովրդեան բաղդը կը դարբնեն, շատ անգամ կը տեսնեն որ իրենց հոգետանջ վաստակի արդիւնքն առաջադրեալ նպատակէն խիստ տարբեր մի գոյացութեան ծնունդ տուած է յաճախ։

Այսպէս ուրեմն, երբէք չեմ կարող համաձայնիլ մեր կարգ մը հրապարակագիր պարոններու կարծեաց որք յոյժ լաւատես են հանդէպ հայ ապագայի, և այդ լաւատեսներէ ոմանք, կարծեմ մի խորհրդաւոր և նպատակաւոր օրօր կը կարդան հայ ազգի անկեալ դրութիւնն դեռ երկար ժամանակ ստրկական մահճի մէջ անգործութեան դատապարտելու դաւաճան առաջադրութեամբ։

Բայց կան և միամիտ լաւատեսներ, որք ամէն քաղաքական հաճելի երևոյթներէ և հանդիսական ձևակերպութիւններէ խաբուելով միևնոյն օրօրը կը կարդան կարծելով թէ՝ ընդհուպ զրկեալին բողոքը պիտի լսուի, արդարութիւնը զօրութեան պիտի յաղթահարէ. հետևաբար ալ ազգին տառապանքները վերջ պիտի գտնեն ցանկալի վարձատրութեամբ. բայց այս բարեմիտ դասակարգն ալ միշտ կը խաբուի, որպէս առաջին դասակարգն ալ միշտ կը խաբէ, ու այս երկու պարագային մէջ ալ հայն է որ կը տուժէ, ու պիտի տուժէ դեռ շա՛տ ու շատ, եթէ չ'սթափի ցարդ ունեցած յուսախաբութենէն։

Մի օրինակ կրնայ լաւ ևս լուսաբանել այն խնդիրը. նպատակաւոր օրօրողներու մասին որ և իցէ բան աւելորդ է, նոքա ազգին ցեցերն են, ծախուած գործիչներ... շուրջ երեք տարի առաջ Պուլկարիոյ Ռուսչուք քաղաքէն միութեան ձայն մը արձագանք տուաւ բաւական տեղեր. դա «Հայկական Միութիւն» անուն մի ընկերութիւն էր, որ ցրուեց յարտասահման իւր յայտագիրն ու ծրագիրը, պարզ լեզուով այլ փորձառութեամբ խմբագրուած. բարեկամներէս մին կը գրէր թէ՝ «դրանց հեղինակը մի հայ սանտգճի դաւառացու հետ մի քանի անչահախնդիր երիտասարդներ են, և տեղացի Հնչակեանք սաստիկ հակառակում են նրանց ևն» այդ միութեան աշխատաւորներ ընդարձակ թղթակցութիւն ունեցան շատ գործիչներու հետ, յորոց մին Բարիզէն կը գրէր նոցա թէ՝ «արդէն հայկական խնդիրը Ֆրանսայի կանաչ սեղանին վրայ է և քիչ օրէն իւր նպաստաւոր լրումն ու կարգադրութիւնը կ'ստանայ. ուստի աւելորդ է այլ ևս ո՛ և է նոր ձեռնարկ...»։

Այս լաւատես տողերը հաճոյքով կարդացին միութեան անդամները մանաւանդ, զի գրողն էր մի յայտնի քաղաքագէտ, որ սակայն սխալած էր ի նկատի ունենալով Սասունի կոտորածի եւրոպական սաստիկ քննութիւնը, ձեւական երեւոյթը։ Ռուսչուքի միութիւնը տեղական Հնչակեաններու մոլեգնութեան բաղխեցաւ, և այդ փոքրիկ ոյժը՝ գուցէ ապագային մեծ դեր ունենար, հակառակ կարևոր անձերէ գտած ընդունելութեան յանկարծ աներևութացաւ։ Այս տեղ նկատառման Հ կետէր քայքայեցին բարենպատակ գործը. մին՝ Հնչակեան կործանարար հակընդդիմութիւն, միւսը՝ բարեմիտ լաւատեսութիւն, երկուքն ալ վնասակար, յորոց մի անգամ ընդ միշտ հեռանալու կամ խուսափելու եթէ մի դարման կայ, դա միութիւնն է. թող փորձեն որչափ կամին մեր ազգասէրներ, գործիչներ, կուսակցականներ, նուիրատուներ, լաւատեսներ, ազգը օրօրողներ ևն. ևն. մի օր վերջապէս մի բան միայն պիտի կարենան ընել, իմանան որ Միութիւն պէտք է. բայց այդ իմացման օրը նոքա պիտի տեսնեն որ շատ ուշ, շատ ետ մնացեր են ալ. պիտի տեսնեն որ հայ հանրութեան և յեղափոխութեան խրամատը շատ ընդարձակուել է, ու ամէն ճիգ, աշխատանք ու ջանք անօգուտ պիտի լինին, ու վերջնապէս մի անգամ ալ պիտի տուժէ հայ ազգը և այդ տոյժն ամենէն սոսկալին պիտի լինի. վասնզի յուսահատութիւնն է որ պիտի տիրէ ազգին սրտին, մտքին ու հոգուն վրայ, և եթէ այսօր դեռ կուսակցական պայքարներէ, մանաւանդ սրդոզած, զզուած մի մեծամասնութիւն կայ, որուն դեռ քաղցր կը հնչէ Միութիւն ձայնը, այն ժամանակ այդ Միութիւն ձայնն ալ նորա ականջին այնպէս պիտի հնչէ, ինչպէս կը հնչէ Հայաստան բառը Համիտի ականջին։

Դէ՛հ, հիմա առաջ, ո՛վ գործիչներ, նշանակեցէք սոյն գուշակութիւնը յենլով անցեալին վերայ. Ջանացէք յառաջ վարել ձեր գաղափարները, գիտեմ առանց ուշ դնելու յորդորիս, բայց դժբաղդ ժամանակին, որ վերջին փորձառութեան ժամանակ պիտի կոչուի, ձեր ապաշաւանաց ու զղջման առաջին արտասուքը թափողը ես պիտի լինիմ. ի զուր պիտի խոստովանիք գուշակութեանս ճշմարտութիւնը, որպէս երբեմն կարմիր հնչակեաններ, որք տարիներ յառաջ գուշակական մակաբերումներս քամիի ձայնի նման հոսհոսական բան մը համարելէ յետոյ, մի օր ալ «ա՜խ, իրաւունք ունիս եղեր, մենք խաբուե՞ր ենք, ափսո՜ս... ևն. երեմիականներով ողբացին. Հնչակի զենիթէն մ'էք և Հնչակեան կոմիտէի անդամ, անչո՛ւշտ անոնք շատ լաւ գիտէին այս ամենը, կը զարմանամ թէ ինչպէ՞ս ձեզ հետ մատնիչի մը նման կը վարուին։ Ցեղափոխականը յեղափոխական մը տէռորի ենթարկէ՞.... և այն ալ առանց պատճառի՞..., շատ անբնական է։

Արփիար — Է՛հ, սիրելի՛ս, անձնական խնդիր է միայն, ես շատ լաւ համոզուած եմ, որ Դաշնակցական կոմիտէն այդպիսի ձախող քայլ մը չէր առնէր, Եու....ին և Մելքոնին անձնական գործն է այս, անձնական հակառակութեան արդիւնք..։

Վահան Մօղեան — Բայց վատութիւն է այդ։

Արփիար — Անչո՛ւշտ։

Վահան Մօղեան — Բարեբաղդաբար վերքերդ թեթև են։

(Այս միջոցին ծառայ մը կուգայ իմաց տալ Արփիարին)։

Ծառան — Փաշայի կողմէն մարդ մը եկած է ձեզ տեսնել կուզէ։

Արփիար — Թող վեր գայ, (Մօղեանին դառնալով) դուք գացէք, այստեղ չի տեսնէ ձեզ։

Վ. Մօղեան — (Արփիարի ձեռքը սեղմելով) ցտեսութիւն։

Արփիար — Շնորհակալ եմ, ցտեսութիւն։

(Մօղեան կը մեկնի, քիչ յետոյ մի քօմիսէր ներս կը մտնէ)։

Քօմիսէր — Անցած ըլլայ Արփիար էֆէնտի, այս ի՞նչ բան է։

Արփիար — Է՛հ, վերջապէս շուները հոտ առին, իմացան որ ես յեղափոխական չեմ և փաշայ էֆէնտիին հետ յարաբերութիւն ունիմ։

Քօմիսէր — Այո՛, փաշա էֆէնտին ալ այն կ'սէր, երբ ձեր վիրաւորուիլը լսեց շատ յուզուեցաւ, և անմիջապէս զիս կանչեց, որ գամ ձեր վիճակը իմանամ. շատ շատ բարեւներ ունի, և անհամբեր անվտանգ լինելնուդ բարի լուրին կ'սպասէ։

Արփիար — Փաշա էֆէնտիին այդ հայրական հոգածութենէն շատ շնորհակալ եմ, ես կեանքս իրեն կը պարտիմ, իր շնորհիւ ապրած եմ ցարդ և ասկէ վերջն ալ դարձեալ իր շնորհիւ կ'ապրիմ. փառք Աստուծոյ վէրքերս ծանր չեն. բժիշկը ապահովցուց, որ բնաւ վտանգ չկայ և թէ մի քանի օրէն կարող եմ առողջանալ։

Քօմիսէր — Փա՛ռք Աստուծոյ, փաշա էֆէնտին շատ ուրախ պիտի ըլլայ։ Բայց չի կրցի՞ր ճանչնալ ով լինելը։

Արփիար — Ո՛չ, միայն գիտեմ որ Դաշնակցական մ'էր, որովհետև «յանուն յեղափոխութեան և յանուն Դաշնակցութեան քեզ պիտի սատկեցնեմ, մատնի՛չ դաւաճան» ըսաւ և սկսաւ դաշոյնը մի քանի անգամ կողերուս խոթել։ Այդ միջոցին վրաս անհաւատալի ոյժ մը եկաւ, անպիտանին մէկ ձեռքէն բռնեցի և միւս ձեռքս ունեցած անձրևանոցիս միջոցաւ ես զիս պաշտպանեցի և սկսայ պոռալ...։ Բայց երէկ գիշեր ի՞նչ սարսափելի գիշեր էր... ձայնս ո՞վ կարող էր լսե՛լ... քամին ուժգին կը բվար, բուքը մարդուս շունչը կը կտրէր, փողոցը մարդ չկար։ Սակայն վերջապէս խշլային պահակները լսեցին ձայնս և սկսան օգնութեան հասնիլ, այս միջոցին մարդասպանը խոյս տուաւ։

Քօմիսէր — Այո՛, բաւական տեղ հալածեր են, սակայն վերջապէս չեն կարողացեր ձերբակալել, օդին աննպաստ հանգամանքէն անպիտանը օգտուեցաւ, շատ ճարպիկ մարդ է եղեր, հարիւր տարին անգամ մը ասանկ նպաստաւոր օր չէր կարող գտնել. այսօր բոլոր երթևեկութիւնը դադրած է, շուկան գոց է, մինչև որ կառք մը գտայ հոգիս ելաւ, քառապատիկ աւելի գին վճարեցի, տեսէ՛ք, տակաւին ձիւնախառն սաստիկ փոթորիկը չէ դադրած, փողոցը շուն մը անգամ չկայ։

Արփիար — Այո՛, անպիտանը Պատրիարքին մէկ հրամանը բաւական է։

(Անգլիոյ դեսպանատան առաջին թարգմանը՝ Պլաք մէջ մտնելով Մաքսիմոֆին կ'սէ։)

Պլաք — Պարոնին ըսածը շատ ճիշդ է, մենք նախապէս պէտք էր Պատրիարքարանին Եկեղեցին պարպէինք և յետոյ այս։

Գ. Զ. — Եթէ հրաման կընէք այս վայրկեանիս Պատրիարքին կը դիմեմ, Եկեղեցին պարպել կուտամ և յետոյ այստեղ կը վերադառնամ Պատրիարքէն թուղթ մը առնելով։

Մաքսիմոֆ — Շա՛տ լաւ։

Գ. Զ. — Ինծի պաշտօնական հրաման մը առէք որ ճամբան կառքս չի կեցնեն։

Պլաք — Շատ իրաւացի է։

Մաքսիմոֆ — (հաղարապետին) Բաց հրաման մը տուէք որ այս մարդուն նեղութիւն չ'տան։

(Հաղարապետը թուղթ մը գրէ և կնքելով Գ. Զ.ին կը յանձնէ. Գ. Զ. իսկոյն կը մեկնի)։

(Վարագոյրը կիջնէ։)

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

(Տեսարանը կը ներկայացնէ մի սենեակ, ուր Արփիար վիրաւոր անկողնոյ մէջ պառկած է, անկողինին մօտ աթոռներու վրայ նստած են եղբայրը Տիգրան Արփիարեան և Վահան Մօղեան։)

Տիգրան Արփիարեան — (խօսքը Արփիարին ուղղելով) Եղբայր ասիկա Դաշնակցականներուն գործն է անպատճառ։

Արփիար — Կասկած չկայ, այն Եու....ին գործն է, Մելքոնն ալ մատ ունի։

Վահան Մօղեան — Բայց Արփիար էֆէնտի, Դաշնակցականները ի՞նչ պատճառ ունէին ձեզ տէռորի ենթարկելու, դուք որ յեղափոխական մ'էք և Հնչակեան կոմիտէի անդամ, անչո՛ւշտ անոնք շատ լաւ գիտէին այս ամենը, կը զարմանամ թէ ինչպէ՞ս ձեզ հետ մատնիչի մը նման կը վարուին։ Ցեղափոխականը յեղափոխական մը տէռորի ենթարկէ՞.... և այն ալ առանց պատճառի՞..., շատ անբնական է։

Արփիար — Է՛հ, սիրելի՛ս, անձնական խնդիր է միայն, ես շատ լաւ համոզուած եմ, որ Դաշնակցական կոմիտէն այդպիսի ձախող քայլ մը չէր առնէր, Եու....ին և Մելքոնին անձնական գործն է այս, անձնական հակառակութեան արդիւնք..։

Վահան Մօղեան — Բայց վատութիւն է այդ։

Արփիար — Անչո՛ւշտ։

Վահան Մօղեան — Բարեբաղդաբար վերքերդ թեթև են։

(Այս միջոցին ծառայ մը կուգայ իմաց տալ Արփիարին)։

Ծառան — Փաշայի կողմէն մարդ մը եկած է ձեզ տեսնել կուզէ։

Արփիար — Թող վեր գայ, (Մօղեանին դառնալով) դուք գացէք, այստեղ չի տեսնէ ձեզ։

Վ. Մօղեան — (Արփիարի ձեռքը սեղմելով) ցտեսութիւն։

Արփիար — Շնորհակալ եմ, ցտեսութիւն։

(Մօղեան կը մեկնի, քիչ յետոյ մի քօմիսէր ներս կը մտնէ)։

Քօմիսէր — Անցած ըլլայ Արփիար էֆէնտի, այս ի՞նչ բան է։

Արփիար — Է՛հ, վերջապէս շուները հոտ առին, իմացան որ ես յեղափոխական չեմ և փաշայ էֆէնտիին հետ յարաբերութիւն ունիմ։

Քօմիսէր — Այո՛, փաշա էֆէնտին ալ այն կ'սէր, երբ ձեր վիրաւորուիլը լսեց շատ յուզուեցաւ, և անմիջապէս զիս կանչեց, որ գամ ձեր վիճակը իմանամ. շատ շատ բարեւներ ունի, և անհամբեր անվտանգ լինելնուդ բարի լուրին կ'սպասէ։

Արփիար — Փաշա էֆէնտիին

սուզակէտ ինկած ժամանակ, սոսկալի կոտորածներ շատ հնչակեաններու խիղճն ու սիրտը ծակած էին, բայց դարմա՛ն, վէրքը մահացու էր։

Միութեան հեռատես, ազդասէր և վեհանձն քայլն առնել մենք կ'սպասենք Դաշնակցականներէն, որք երբեմն պատրաստ էին այս գաղափարի իրականացումն ընդգրկելու. իսկ այժմ ի՞նչ կը մտածեն....։

Շահէն

ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ

ՄԱՀ ԴԱՒԱՃԱՆԱՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Մահ Դաւաճանաց» անուամբ կազմակերպութեան մը նոր գոյութիւն ունենալու մասին, կարդացինք «Միութեան» 30րդ թուի մէջ, իսկապէս մեր վրայ քիչ տպաւորութիւն չբրաւ այդ գովելի ձեռնարկը. ձեռնարկ մը, որ նոյն իսկ արտասահմանի մէջ, երես առած հակայեղափոխականներուն ալ պիտի դողցնէ. ձեռնարկ մը, որ Տաճկա-Հայաստանի մէջ իւր անհունս բարերար ազդեցութիւնը ըրած է արդէն, հանդէպ այն դաւաճաններուն, որոնք իրենց արենակից եղբարցը մատնելով և բարբարոս տիրող կառավարութեան ձեռքը յանձնելով կը հրճուէին, ի հաճոյս դիւական։ Միթէ՞ այդպէս բարերար ձեռնարկ մը երբ այսօր արտասահմանի մէջ կը լինի, միթէ կը հարցնենք օգտակար չէ՞. օգտակար չէ՞, երբոր արտասահմանի մեղկացուցիչ ազատութենէն օգուտ քաղելով հակայեղափոխական դասակարգը, հայ ժողովրդի ամենէն սրբագործուած և իտէալական գործը կը դաւաճանէ, հապա՞, ի՞նչ ընէ յեղափոխական մաքուր տարրը, ի՞նչ ընէ, ամենէն իրաւացի միջոցն է վերոյիշեալ «Մահ Դաւաճանաց» անունով լուրը, գաղտնապահութեան վրայ հիմնուած կազմակերպութիւնը առաջ տանել և նոյն իսկ արտասահմանի մէջ դողացնել անխիղճ ու անագորոյն հայ ազգուրաց դաւաճանին։

Ժամանակն է, դուցէ և անցեր է, որ օր առաջ այդպիսի կազմակերպութեան մը ամենախելացի կերպով ոյժ տանք, որպէս զի կարող լինինք այն համաճարակ հակայեղափոխական լինելու ախտէն ազատել արտասահմանի հայութեան մեծ մասը։

Չ'կայ աւելի զօրաւոր միջոց մը հակայեղափոխական դաւաճաններուն և յեղափոխութեան անունը արատաւորող ղեկավարող Մեծ պարոններուն ետ կասեցնելէ իրենց կորստաբեր ընթացքէն, քան այս, այսինքն ուղղակի ունենալ այդ անունով կազմակերպեալ ճիւղեր, արտասահմանի զանազան հայ գտնուած գաղութներու մէջ։

Մենք վստահ ենք, այն օրը, երբ Տաճկա-Հայաստանի մէջ ինչպէս որ եղաւ, նոյնպէս արտասահմանի մէջ ալ երբ հայ անձնազոհ յեղափոխականի անխնայ սրի ներքոյ կտոր կտոր լինի դաւաճանը, այլ ևս համաճարակի առաջը կառնուի, այլ ևս օր ցերեկով, մութի մէջ, կամ արևին լոյսին տակը, ո՛ և է հայ մարդ մը չ'պիտի համարձակուի հայհոյել յեղափոխութիւնը, դաւաճանել իր արենակից եղբօրը, կամ դուրս հանել ո՛ և է յեղափոխական կերպարանք ունեցող գաղտնիք մը։

Ց'այսօր լոկ երազ եղած էր այդպիսի ոգի ու սիրտ ներշնչող, փրկարար կազմակերպութեան մը գոյութեան խնդիրը, բայց այժմ ուրախ ենք որ, երազ չէ արդէն, խօսք չէ արդէն, այլ երազի և խօսքի սահմանէն դուրս իրականութեան և գործնականութեան շրջանը կ'անցնի, կը թեւակոխէ։ Ցաջողութի՛ւն ամեն կերպ։ Ուրախալին այն է, որ սոյն տեսակի կազմակերպութեան մը գոյութեան խնդիրը արդէն իսկ շատ տեղեր արձագանք գտած է, ինչպէս որ հեռաւորն Ամերիկայի մէջ և այլ զանազան տեղեր։

Ի՞նչ կը կարծէիք ազգուրաց մատնիչներ, դո՛ւք որ արտասահմանի օտար ազատութեանը մէջ ձեզ տեղաւորած էք, միթէ՞ հայ յեղափոխականի մահաբեր սուրը ձեզ չի կարող գտնել. սխալ է եթէ համոզուած էք թէ չի կարող գտնել, աշխարհի մէջ ոչինչ չ'կայ, որ գլուխ չ'ծռէ, որ չ'խոնարհէ յեղափոխութեան ու իր ճշմարիտ անվեհեր հետևորդներուն։

Հայ մատնիչներ, դուք եթէ արծուոյ թեւեր ունենաք և երկինք թռչէք, եթէ հիդրաներ լինէք ու սանտարամետը իջնէք, քաջ գիտցէք, որ երկնքի բարձրութեանը մէջ ու սանդարամետի խորխորատներուն յատակը, դարձեալ ձեզ կը գտնէ հայ յեղափոխականի սուրը, դարձեալ նա է ձեր հոգէառ Աղբայելը, դարձեալ նա է որ ձեր արժանի պատիժը պիտի տայ, յաւիտենական անէծքի ու նախատանց սև մահաղրոյմը դրոշմելով ձեր ճակտին։

Ուրեմն սոյն «Մահ Դաւաճանաց» անուամբ կազմակերպութեանը կը մնայ իր բարերար արձագանքները տալ յայսմհետէ ամեն հայ անկիւններու մէջ, և իր նշանաբանը լինելու է հաստատակամ գործունէութիւնը, լրջութեան և շրջահայեցութեան վրայ յենուած. յամենայն դէպս ի նկատի ունենալով արտասահմանի մէջ հայուն շրջապատող քաղաքական նրբին հանգամանքները։

Թո՛ղ լինին որքան կուզեն հայութեան կաշկանդող հանգամանքներ արտասահմանի մէջ, այն ժամանակ կը մնայ վերոյիշեալ կազմակերպութեան անդամներուն գործել խելացի կերպով. կշռուած միջոցներով և որ ամենակարևորն է Ջանքով ու Կամքով։

Հայ երիտասարդութիւն, մեզ վրայ յանուն հայրենասիրութեան, յանուն հայ յեղափոխութեան, սրբազան պարտականութիւն կայ մաքրել ասպարէզը բաղդախնդիրներէ, կրքոտ ու եսական կուսակցամոլ խռովարարներէ և ինքդինքնին յեղափոխական վարիչ համարող **կեղծ** ու պատիր խարեբաներէ։

Սոյն «Մահ Դաւաճանաց» անունով կազմակերպութեան սաւաւելութիւնը այն պիտի լինի, որ գերազանց կերպով խիստ պիտի լինի իր գծած կանոններու գործադրութեանցը մէջ, և միևնոյն ժամանակ խստապահանջ պիտի լինի դէպի իր անդամները գաղտնապահութեան վերաբերմամբ։

Հա՛յ երիտասարդութի՛ւն, դարձեալ կոչում կ'նենք ձեզ, որ, ով որ կերևայ թէ շատոնց ինձ կը հետևի եղեր և յարմար առիթը գտնելով ուզեց իր չար նպատակը գործադրել, բայց փառք Աստուծոյ, նպատակին չի հասաւ։

Քօմիսէր — Փառք Աստուծոյ. սակայն այդ Դաշնակցականներէն մարդ չէ՞ք ճանչնար, կօմիտէն չէ՞ք գիտեր։

Արփիար — Մէկը կը ճանչնամ և այն ալ բուն թշնամիս, գիս վիաւորել տուողը։

Քօմիսէր — (ուրախութեամբ) Ուրեմն, չո՛ւտ անունը և տեղը իմաց տուէ՛ք, անմիջապէս ձերբակալենք։

Արփիար — Չեմ կարծեր որ յաջողիք, անպիտանը արդէն մի քանի օրէ որ թաքնուեր է, թերևս Պօլսէն մեկնած է ալ։

Քօմիսէր — Բայց ո՞վ էր, ինչո՞ւ ժամանակին իմաց չի տուիք։

Արփիար — Ձեռքս փաստեր չունէի, փաշային իմացուցած էի որ հսկեն վրան։

Քօմիսէր — Անունը ի՞նչ էր։

Արփիար — Եու...։

Քօմիսէր — Հա՛, այդ անպիտանը, այո՛, շատ հետևեցանք անոր, բայց ապացոյց մը, փաստ մը ձեռք չի ձգեցինք. եթէ ռուսահպատակ չի. լինէր գործը դիւրին էր, կարող էինք անմիջապէս ձերբակալել. ռուսահրապատակ լինելուն չի համարձակեցանք առանց ապացոյցի ձերբակալել. հիմա կը կարծէ՞ք թէ Պօլսէն մեկնած լինի։

Արփիար — Շատ հաւանական է. բայց դուք դարձեալ խուզարկութիւններ կատարեցէք, մանաւանդ Ծովի վրայի հսկողութիւնը կրկնապատկեցէք։

Քօմիսէր — Անպատճառ, եթէ չէ փախած կը ձերբակալուի։

Արփիար — Կը խնդրեմ որ փաշա էֆէնտիին յայտնէք թէ ես այլևս Պօլիս չեմ կարող մնալ, անպատճառ Դաշնակցականները ինծի պիտի հետեւին և գիս պիտի սպաննեն. ես շատ լաւ գիտեմ որ անոնք գիտցած են իմ գործերս, երեսիս ըսին ինչ որ ըրած եմ յօգուտ տէրութեան, այո՛, համոզուած են որ ես լրտես մը եմ և չի պիտի ուզեն գիս ապրեցնել։

Քօմիսէր — Իրաւունք ունիք, գլխուս վրայ փաշային կըսեմ։ Կը ներէք, որ շուտով պիտի երթամ, փաշան մտատանջութեան մէջ է, բարի լուրի մը կ'սպասէ, ուշա՞փ ուրախ պիտի ըլլայ։

Արփիար — Խնդրեմ, փաշային մատուցէք իմ խոնարհ յարգանքներս և սրտագին շնորհակալութիւններս։

Քօմիսէր — Գլխուս վրայ, գլխուս վրայ, մնաք բարով։

Արփիար — Երթաք բարով, շատ շնորհակալ եմ։

(Քօմիսէրը կը մեկնի)։

Տիգրան Արփիար — Բայց եղբայր, գիտես որ դուն ալ քիչ մը վրան բաց գործեցիր, զգոյշ չեղար, Դաշնակցականները ամեն բան իմացան, այն անպիտան Մելքոնն ալ ամեն ամեն կողմ տարածեց, Դաշնակցականները մեղաւոր չեն, անոնք յեղափոխական մարմիններ իրենց պարտականութիւնը կատարեցին քեզ ըսպաննել ուզելով, այո՛, լրտեսի դերդ գիտցան, մեղաւորը դուն էիր որ համարձակ գործեցիր։ Ձեր կօմիտէն ի՞նչ իրաւունքով սպաննել տուաւ Դարակէօզեանին, Դաշնակցականները ձեր կօմիտէէն աւելի իրաւունք ունէին..։

Արփիար — Այո՛, իրաւունք ունիս եղբայր, մենք Դաշնակցականները նկատի չունեցանք. Հնչակեաններուն մէջ բաւական յաջող կատարեցի դերս, այսօր վրաս չեն կասկածիր Հնչակեանները, կատարեալ հաւատք ունին և Մելքոնին ըսածները իբր գրպարտութիւն կ'նդունին։ Բայց այս Դաշնակցականնե՞ը..., սատանի նման իմ գաղտնիքս իմացան, մանաւանդ ա՛յն Եու... օլաճախը։

Տիգրան Արփիար — Բայց նորէն կ'սեմ, ո՛չ Դաշնակցական, ո՛չ Եու..ն և ո՛չ ալ Մելքոն յանցանք ունին, դուն շատ անզգոյշ վարուեցար, վրան բաց գործեցիր. Հնչակեաններուն կարող էիր խաբել, որովհետև անոնց օգտին կը գործէիր և մազի չափ կասկածելու տեղի չի տուիր, բայց Դաշնակցականներուն գալով, անոնք միայն կասկածելի գործերդ տեսան։

(Այս պահուն ծառան ներս կը մտնէ)։

Ծառան — Թափառիկ եկած է, ձեզ տեսնել կուզէ։

Արփիար — (խօսքը Տիգրանին ուղղելով) Հը՛մ, ես ասկէ ալ կասկած ունիմ։

Տիգրան — Ի՞նչ. Թափառիկն ալ անոնցմէ է՞։

Արփիար — Կը կասկածիմ, Եու...ին հետ շատ բարեկամ է։

Տիգրան — Բայց քեզ հետ ալ բարեկամ էր, ո՛ր և է պատճառով զինքը վշտացուցա՞ծ ես։

Արփիար — Ո՛չ, միշտ մեր թերթին աշխատակցած է, միշտ մեզ բարեկամ է, սակայն այն սատանայ Եու...ը զայն համոզած կը լինի, և ես կը կասկածիմ որ անոնց կողմէ եկած է վիճակս իմանալու համար։

Տիգրան — Եթէ կասկածներդ իրական ըլլան, շատ դէշ բան է, որովհետև մեծ համարում և յարգ վայելող մէկն է, անոր խօսածները մեծ կշիռ կրնան ունենալ։

Արփիար — Ճի՛շդ է, բայց ալ անցաւ. արդէն Պօլիս չեմ կրնար մընալ, Եւրոպայ ալ անոնց ձայնը չի լսուիր, ես մերիններուն հետ դարձեալ կարող եմ գործել։

Տիգրան — Վարը կ'սպասէ կոր, պիտի ընդունի՞ս։

Արփիար — Այո՛, քանի որ տեսութեանս եկեր է։ (Ծառային) Գնա ըսէ թո՛ղ վեր հրամմէ։

(Ծառան կը մեկնի և քիչ յետոյ Թափառիկ ներս կը մտնէ։)

Թափառիկ — (Արփիարի ձեռքը սեղմելով) Բարև Արփիար էֆէնտի, այս ի՞նչ զարմանալի դէպք է։ Դրժբաղդ լուրը հիմա լսեցի, Թրամվայները չեն բանիր, այս օդին ոտքով քալել անկարելի է, կառքերն ալ հազուագիւտ են դարձեր, 100 փարայի տեղ 10 ղրուշ վճարեցի, չի կրցի համբերել, եկայ որպիսութիւնդ իմանալ. կը յուսամ թէ վէրքերդ անվնաս են։

Արփիար — Այո՛, փառք Աստուծոյ անվնաս են, թշնամիներս իրենց նպատակնուն չի հասան։

Թափառիկ — Սակայն շատ անյուսալի և աներևակայելի բան է, ձեզ սպաննել ուզե՞ն, և ո՞վ...։

Արփիար — (չեշտելով և քմծիծաղով) Ո՞վ.., Դաշնակցականնե՞ը, Եու.... անպիտա՞նը...։

Թափառիկ — (զարմացմամբ) Եու....եա՞ն...։

Արփիար — Այո՛, այդ ստո՞ր ապարածը, իմ անարգանքներուս և արհամարհանքներուս չի կրնալով փոխարինել, վատաբար փորձեց գիս սպաննել տալ. ես անոր խէրը կանիծեմ.՝.՝.։

(Շարունակելի)

անկեղծ է, թո՛ղ հետեւի ուշի ուշով մեր այն գրածներին, և պիտի ըմբռնէ որ, գեռ կան այնպէս անձնուէր մշակներ Ս. Գործին, որոնք թէ՛ հայրենիքի և թէ՛ արտասահմանի մէջ, ամեն րոպէ պատրաստ են զոհելու իրենց կեանքը յեղափոխութեան փրկարար գործին։ Շա՜տ զոհեր տուինք հայրենիքի մէջ, շա՜տ կորիճներ ինկան կռուի դաշտին վրայ, հետեւինք անոնց սրբագործուած օրինակին, չի թողունք որ դաւաճանները հայհոյեն անոնց Ս. Գերեզմանները, Ս. Ոսկորները, ո՛ւր ալ ըլլանք, միշտ զոհուելու պատրաստ տրամադրութեան մէջ պիտի լինինք։

Արտասահմանի և թէ հայրենիքի մէջ եղող դաւաճանները իրենց արժանի պատիժը պիտի ստանան վաղ թէ ուշ։ Հայրենիքը և մեր տառապեալ եղբարց յոյսը մեր վրայ է, ի Թիրև չ'հանենք այդ յոյսը, որքան կը բաբախեն մեր սրտերը, որքան կը շարժուին մեր բազուկները, որքան արիւն կայ մեր երակներու մէջ և որքան խելք ու հանճար կայ մեր գլուխներու մէջ. այդ բոլորը, այդ բոլորը այո՛, հայրենիքի ազատութեանը և հայ ազգի բարօրութեանը նուիրենք։ Հեռի՜ մեզմէ յուսահատութիւնը, հեռի՜ մեզմէ դասալքութիւնը։ Ուրեմն կը մնայ մեզի գաղափարակիցներով ճանչնալ մէկզմէկու և իրար մօտենալ, անելու համար այն ինչ որ անհրաժեշտ է։

Տարօնցի Շ.

ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՍՐԻԿԱՆԵՐԸ

Դրօշակեաններուն Օգոստոսի ցոյցին լուրը երկու օր ետքը մանրամասնաբար եկաւ բարիզ. Զօպանեան սքանչացաւ և չի դադրեցաւ Դրօշակեաններուն գովեստը ընելէ. Գլէժմանսօն իր «Ժիւսթիս» թերթին մէջ նոյն օրերը յօդուած մը հրատարակեց, որով պաշտպանելով ցոյցը, կ'ըսէր թէ՛ հայ յեղափոխականները պարտէին Օսմանեան Պանգան օդը հանել։

Զօպանեան գնաց Գլէժմանսօն տեսնել, և իրիկուան եկաւ մեզի պատմել իր տեսակցութիւնը ֆրանսացի ծանօթ լրագրապետին հետ։

— Գլէժմանսօն իրաւունք ունի, կը գոչէր բորբոքեալ, յեղափոխութիւնը յախուռն կերպով կ'ըլլայ. անգամ մը որ Պանգան մտեր էին, պէտք չէին դուրս ելլել, օդը հանելու էին։ —

Հինգ վեց օր վերջը, սագու մէն ալ երթամ Ն... Փ... Ն տեսնեմ անգամ մը, ըսաւ, նայինք անիկա ինչ կարծիք ունի այս ցոյցին վրայ։

Իրիկուան դարձեալ եկաւ, այս անգամ բերանը բոլորովին փոխուած էր։

— Մեր ազգին յեղափոխութիւն պէտք չէ՛, պէտք է աշխատինք գիրքերով, յօդուածներով և հրապարակախօսութիւններով հայ ազգը ճանչցունել Եւրոպային. կարգ մը բաղդախնդիրներ ելեր խելքերնուն փչածին պէս գործեր կը տեսնեն, և ազգին աւելի վնաս կը հասցունեն քան թէ օգուտ։

Գէորգ Աստուր որ ներկայ էր Արշակին գաղափարներուն այս փոփոխութեանը արհամարհանօք գոչեց։

— Ծօ՜ ինչ տեսակ մարդ ես դուն, բեցի համար գաղափար չունիս, երկու օր առաջ գացիր Գլէմանսօն տեսար, եկար ըսիր որ յախուռն յեղափոխութիւն պէտք է մեզի. այսօր ալ գացիր Ն... Փ...Ն տեսար, եկեր կըսես թէ յեղափոխութիւնը պարապ բան է. ինչ տեսակ ողորմելի արարած ես դուն։ —

Խեղճ Աստուր չէր գիտէր այն ատեն թէ՛ Ն... Փ... Ն իր խօսքերուն աւելի համոզիչ փաստ մ'ալ աւելցուցած էր Արշակին գաղափարին վրայ ներգործելու համար։ Արդարև ամիսներ ետքը իմացայ որ՝ Ն... Փ... Ն Արշակին 200 ֆրանք ամսական կապեր է։

«Անկցի յեղափոխութիւն»! քանի որ հիմակ Զօպանեանին ստակ տուողը անանկ կուզէր։

Արշակ Փ...ին խրատը աղէկ մը կատարած ըլլալու համար, եկաւ հարիւր հատ այցետոմս տպագրել տուաւ այսպէս.

A. Tchobanian
Journaliste Arménien

և հայ ազգը Եւրոպային ճանչցունելու համար, սկսաւ առտուընէ մինչև իրիկուն «Գաաթիէ Լաթէնի» գեղուհիներուն ցրուել իր այցետոմսերը, չէ՛ մի որ Journaliste Arménien տիտղոսը կարդալով, գեղուհիները պիտի հետաքրքրուէին գիտնալու թէ՛ ինչ էր «Journaliste Arménien»։

Զանց կընեմ ըսել թէ՛ ինչո՞ւ Մ... վռնտեց զինքը, և ամսական 50 ֆր.ը գադրեցուց։

Զանց կընեմ ըսել թէ՛ ինչո՞ւ Ն.. Փ... Ն միջոց մը երես դարձուց Արշակէն։

Հարկ չեմ տեսներ նոյնպէս պատմել Ազասիի հրատարակած «Զէյթուն» գրքին տպագրութեան ծախքերուն մէջադէպերը։

Ինչ որ գրեցի բաւական է՛ հասարակութեան ներկայացնելու համար ազգային յեղափոխութեան առաջին սրիկան։

Բարոյականէ, նկարագրէ և գաղափարէ զուրկ արարած մ'է, ինչ մնաց իրմէն եթէ ոչ կոյտ մը որ կոյանոցին կը վերաբերի, բահի հարուածով մը կը նետեմ աղա՜ կոյտը կոյանոցին մէջ։

Ս. Ստեփանեան

Բարիզ 27 Մայիս 1899

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ

Լա Հէյ 2 Յունիս

Խաղաղութեան Վեհաժողովոյ Թուրք պատուիրակները յաջողեցան արգիլել Բրօֆէսէօր Մինաս Չերազի բանախօսութիւնը Հայաստանի և Հայկական կոտորածների մասին։ Այս արգիլումը կը գրգռէ Հոլանտական մամուլը, և կը բողոքէ խստիւ։ Շատ խմբագիրներ այցելութեան երթալով Բրօֆէսէօրին, յայտարարեցին թէ, պատրաստ են իրենք՝ պաշտպանել իր արդար դատը։ Հանրաժողովոյ վեց անդամներն ալ միևնոյն վստահութիւնը ներշնչեցին անոր։ Մէկ խօսքով միջադէպը ծանր է։ Բանախօսութիւնը իսկապէս պիտի կատարուի, և Հոլանտայի Արտ. գործոց Նախարարը չ'պիտի դժկամակի այդ մասին։

Լա Հէյ 4 Յունիս

Շնորհիւ երկու բարձրաստիճան անձնաւորութիւններու՝ պ. Մինաս Չերազ յաջողած է իր բանախօսութիւնը կատարել Ամսթերտամի մէջ։ Թուրք պատուիրակները այս մասին շատ գրգռուած են։ Գալով Հոլանտայի Արտ. գործոց Նախարարին՝ իր վիճակը շատ ցաւ կ'զգացնէ ամենուն, երբ կընդունի Սուլթանէն Օսմանիէի ականակուռ պատուանշանը։

«Օառա»

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅԿ. ՄԻԹԻՆԿԸ

Հայկական Հարցը Լա Հէյի Դեսպանաժողովին ներկայացնելու նպատակաւ հոս ալ ազգային միթինկ մը կազմուեցաւ Հազարի մօտ հայերու ներկայութեամբ։ Բուլաղ Թաղի Ժիւպէրի Պիսկիլէտի գործատան պարտէզին մէջ, որը այդ օրուան ժողովին համար ձրի շնորհուած էր։ Միթինկին կը նախագահէր Տ'եար Պետրոս էֆ. Կարապետեան. իսկ կազմակերպիչ անդամներն էին պ. Սմբատ Բիւրատ (խմբագիր «Փիւնիկ»ի) պ. Տօքթէօր Յակոբեան, պ. Ապահ և պ. Վահան (Ներկայացուցիչ Դաշնակցութեան)։ Այս ժողովման առթիւ ատենաբանողներն էին՝ պ. Ս. Բիւրատ, Ջէկի էֆ. (հայ կաթոլիկ) պ. Միւհէմ (Ֆրանսացի) և պ. Վահան։ Պ. Բիւրատ միթինկին նպատակը պարզելով առաջարկեց Խաղաղութեան Վեհաժողովին խնդրագիր մը ներկայացնել։ Ջէկի էֆ. տաճկերէն լեզուով բացատրեց թէ՝ մենք Սուլթանէն ոչինչ սպասելու չենք, Հայկական Հարցի լուծումը դարձեալ Եւրոպացիներէն ակնկալելու ենք։ Պ. Միւհէմ ֆրանսերէն լեզուով յայտարարեց թէ՝ հայերը շատ լաւ ըրին որ ամեն տեղ գումարումներ ընելով իրենց վիճակը ներկայացուցին Խաղաղութեան Ժողովին. սա՛ հայութեան համար յարմարագոյն առիթ մ'է, յորմէ եթէ գործնական արդիւնք մը չ'սպասուի, գէթ վնաս մ'ալ չունենար, հետևապէս դիմում ընելն անհրաժեշտ է։ Պ. Վահան գրեթէ միևնոյն նիւթին վրայ խօսելէ յետոյ Դեսպանաժողովին ղրկուելիք խմբագրուած հեռագիրը կարդաց, որը ժողովրդի կողմէ ծափահարուեցաւ։ Ամենէն վերջը պ. Հրանտ Ազատեան ոտքի ելնելով կազմակերպիչ անդամներուն ժողովրդին կողմէ ջերմ շնորհակալութիւն յայտնեց։

Հեռագրէն մի օրինակ ղրկել որոշուեցաւ Տիար Մ. Չերազի, և մի օրինակ ալ Ամերիկոյ նախագահին։

Ժողովրդի ցրուած պահուն պարտէզի դրան առջև դրուած դանձանակէն 12 ոսկի գոյացաւ։

Չի մոռնանք յիշեցնել գոհունակութեան արժանի սա՛ կէտը թէ՝ միթինկը կազմակերպող անդամները թէպէտև կուսակցականներ էին, սակայն ձեռնարկը լոկ ժողովրդական եղաւ և զերծ մնաց կուսակցական ո՛և է նկատումներէ ու ցուցամոլութենէ։

Գահիրէ　　Տարօնցի Շ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ՛ տեղւոյն Գերմանական Դեսպանատան զինուորական կցորդ պ. Մօրգէն Հայաստան ղրկուած է, Ռուս և Թուրք սահմանագլխի վրայ Թուրք կառավարութեան զինուորական ոյժերը և ամրութիւնները քննելու համար։ Գերմանիոյ Վասիրի պետութեան վրայ ունեցած ազդեցութիւնն այնքան լաւ տպաւորութիւն չ'թողուց Եւրոպ'ոյ և մանաւանդ Ռուս կառավարութեան դիւանագիտական ակումբներու մէջ։

— Կ. Պոլսէն Լոնտոնի «Թայմս» լրագրին կը հեռագրեն թէ՛ Բ. Դրան մեծ երկիւղ ազդած է Ռուս զօրքերու յանկարծական առաջխաղացութիւնը դէպի փոքր Ասիոյ հարաւային արևելեան կողմը։

— Հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ քիւրտերը Սասնոյ մօտ հայկական վանքի մը վանահայրը սպանած են։

— Աղեքսանդրիա՛ ժանտախտէ վարակուողներու թիւը մինչև այսօր 24ի կը հասնի, որոնցմէ 6ը մեռած են։

— Կ. Պոլսէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Հայաստանի կացութիւնը երթալով կը վատթարանայ, մանաւանդ Վանի, Բաղէշի Տիգրանակերտի հայոց վիճակը անտանելի է. Մուշի շրջակայքը 8 հայեր սպանուած են. ուրիշ 7 հայեր և 5 Թուրքեր ալ ձերբակալուեր են։

— Սուլթանը Լա Հէյի Թուրք պատուիրակներուն խիստ հրամաններ տըւած է, որպէսզի մերժեն հայ պատգամաւորներու ներկայութիւնը։

— Եօրկիոս իշխանի կեանքին դէմ դաւադրողներու թելադրիչը Երլապ Միւֆսիդ գօմիթէն է եղեր։ Այդ առթիւ Կրետէի մէջ ձերբակալութիւնները կը շարունակուին և հարցաքննութեանց արդիւնքը գաղտնի կը պահուի։

— Տրապիզոնէն կը հեռագրեն թէ՛ հայ հեղափոխականներու խումբ մը՝ Մաուզէրի հրացաններով զինուած, Թուրքիոյ սահմանը մտած և Վանայ Թուրք զօրքերու հետ սաստիկ կռիւ մը բռնուած է։ Պատերազմը կը տեւէ ամբողջ 5-6 ժամ, յորում Թուրքերէն 6 զօրքեր կ'սպաննուին, իսկ հայերէն 10 քաջեր նահատակ կիյնան պատերազմի դաշտին վրայ։ Վանայ հայերը կռուին մասնակցութիւն չունենալով զերծ մնացած են կոտորածի վտանգէն։ Այս դէպքէն անմիջապէս յետոյ Բ. Դուռը հրահանգ տուաւ Վանայ կուսակալութեան որ այդ կողմերէն Պոլիս եկող հայերու անձնագրեր չտրուին։

— Պերլինէն Յունիս 2 թուականաւ կը հեռագրեն թէ՛ Հայաստանի մէջ նոր կոտորած տեղի ունեցած է Թուրքերու կողմէն։ Այս դէպքերէն Պոլսենակ հայեր սաստիկ գրգռուած են, որոնց դէմ խիստ միջոցներ ձեռք առած է Թուրք ոստիկանութիւնը։

— Կ. Պոլսէն կը գրեն թէ՛ նորանոր ձերբակալութիւններ կը լինին. բազմաթիւ հայեր չ'թայակապ բանտերու խորերը կը նետուին, Թուրք ոստիկանութեան ցնորամիտ երևակայութեան հետևանքով. իբր թէ հայերը նոր խլրտումներ յարուցանելու մտադրութիւններ ունենան։ Անցեալ կիրակէ արշալոյսին խումբ մը Թուրք ոստիկաններ ըէվոլվէրնին ի ձեռին Գում-Գաբուի հայոց տները մտնելով շատեր ձերբակալած ու չարաչար տանջանքներով բանտը առաջնորդած են։

ՎԱՆԱՅ ՍՈՎԵԼՈՑ ՀԱՄԱՐ

Աթէնքի և Պիրէօսի նմանապէս Յունաստանի գաւառաբնակ հայերէն կը խնդրենք որ եթէ նպատակ ունին մասնակցելու ի նպաստ Վանայ սովելոց ձեռնարկուած հանգանակութեան, թող փութան իրենց նուէրները ղրկել խմբագրութեանս մինչև ամսոյս վերջը։ Առ այդ ո՛ և է կասկածանաց տեղի չտալու համար «Միութիւն»ի մէջ պիտի հրատարակենք այն նուիրատուաց անունները, որոնք իրենց նպաստը խմբագրութեանս կը ղրկեն։

Փափաքելի էր որ Կրետէի ազգայինք ալ բաժին ունենային այս նուիրական պարտականութեան մէջ. որուն վրայ ի հարկէ խորհած կը լինի տեղւոյն հոգևոր հովիւ Արժ. Տէր Մանուէլ Հայրը։

ԽՄԲԱԳ. «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի
ԱԹԷՆՔ ՀԱՅԿ. ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ